

դրկեն զանոնք, որ աղէկ մը մտիկ ընեն, թէ ի՛նչ կիսօտւի դրացւոյն տունը եւ իրենց իմացունեն:

Պէշիկթաշցին զարնան *Ֆուլեալըք* կ'երթայ եւ ամառն *Օիլամուր* ըսուած զբօսավայրն, ուր կիրակի օրերը *օզգապագ* կիսադան եւ անբարոյական խօսքեր ընելով բարոյականութիւն կքարոզեն հանդիսականներուն, որոնց մէջ պատուաւոր այրեր եւ կիներ գտնուելէն զատ վեց եօթը տարու տղայներ ալ պակաս չեն. իսկ ձմեռը տան մէջ կփակուի կնստի, մինչեւ որ անունի տօնախմբութիւններն սկսին: Այս տօնախմբութիւններն սկսելուն պէս ա՛լ տուն նստիլն արգիլուած է. ամեն գիշեր *անունի* երթալու է, մինչեւ առաւօտ գոնէ օխս մը օղի եւ հինգ օխս գինի խմելու է, որ սիրտը հանգիստ ըլլայ:

Թաղիս օդն ոչ ծանր է եւ ոչ թեթեւ, ոչ ուրախութիւն կպատճառէ եւ ոչ տրտմութիւն, անտարբերութիւն կպատճառէ:

Այս թաղին մէջ երեք հարիւր յիսունի մօտ հայ տուն կայ, բայց այս տուներուն մէջ քանի՞ մարդ կայ. աս ալ տեղւոյն Թաղական խորհուրդէն հասկնալու է:

Թաղիս ներքին բերքն է խել մը գլուխներ. *տօղրամաճի պաշի*, *քերէսթեճի պաշի*, *չամաշըրճի պաշի*, *համամաճի պաշի*. այս գլուխները արքունական շինութիւններու մէջ կգործածուին: Նշանաւոր է նաեւ այս թաղին *քօյուն պաշին*:

Ե.

ՔԱՐԱԿԷՕՍՐԻՒՔ ԵՒ ՍԱԼՄԱԹՕՍՐՈՒՔ

(*Միացեալ թաղ*):

Շուտ ըրէ, բարեկա՛մ, բարեկամներուդ *ես քեզ մեղայ* ըսէ, զնա՛ խոստովանանք եղիր, հաղորդուէ՛ ու ծնողներուդ վերջին ողջոյնդ տուր. եթէ ողջ առողջ դառնանք՝ բան մը կորսնցուցած չենք ըլլար, իսկ եթէ մեռնինք՝ չենք տանջուիր, թէ ինչո՛ւ չկատարեցինք մեր քրիստոնէական, ընտանեկան եւ բարեկամական պարտաւորութիւնները... բարեկամներու *մնաք բարով* չըսած մեռնիլը մեծ անքաղաքավարութիւն է: Թերեւս հարցունես ինձ, թէ ի՛նչ հարկ կայ այս պատրաստութիւններն ընելու, պատերա՞զմ պիտի երթանք: Ո՛չ, բարեկա՛մ, պատերազմ չպիտի երթանք, այլ Խաս - գիւղ բանող շոգենաւներէն մէկուն մէջ պիտի մտնենք:

–Ո՛չ, ո՛չ, ես այդ շոգենաւները չեմ մտներ:

–Տղայութիւն պէտք չէ, մի՛ վախնար: